

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱԴԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

22.10.2019թ.

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ

Հայտատու՝ ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարան

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-3) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

1) Աշխատակազմի առաջատար մասնագետը՝

ա) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համաատասխան փաստաթղթերը.

բ) իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ և այլ գրություններ.

գ) աջակցում է համայնքում գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.

դ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ տարվող պայքարի աշխատանքներ.

ե) իր լիազորությունների շրջանակներում ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.

զ) իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

2) Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) միջնակարգ կրթություն

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Հողի հարկի մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Ջրօգտագործողների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության, իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի իմացություն.

գ) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը տեղի կունենա 2019թվականի նոյեմբերի 26-ին ժամը՝ 12: 00-ին, Մյասնիկյանի համայնքապետարանում

(հասցեն՝ Մյասնիկյան փող. շենք 4).

3) Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը

ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

զ) հայտարարություն այն մասին, որ չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները.

զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),

է) անձնագրի պատճեն

2. Մրցույթին ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարան (հասցե՝ հ. Մյասնիկյան, Մյասնիկյան փողոց 42 ենք, հեռ.՝ (023374) 6-73 և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄարցերով վարչություն (հասցեն՝ Աբովյան 71, հեռ. 0237 2 76 49): Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը՝ 9:00-ից-18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2019 թվականի նոյեմբերի 11-ը ներառյալ: